կայսր վասն նոցա։ Փոյթ լիցի քեզ այսուհետեւ եղբայր մեր, զի լուիցես և ցուցցես ինձ թէ զինչ հրաման տայ կայսր վասն այսորիկ, զի ահաւասիկ առ ձեզ է արքայ յիտալիա, եւ զպատճէն թղթոյն զոր առաքես առ մեզ, ուղղեսցես եկեղեցւոջդ Եփեսոսի առ Յովհաննէս որդին Զեբեթեայ, եւ եկեղեցւոջն Անտիոքայ առ Սիմոնն վիմի։ Եւ ես առաքեմ զպատճէն նորա յեկեղեցին Աղեքսանդրի առ Մարկոս աւետարանիչ։

Եւ Սողոս որ եղեւ մեր ընկեր և գործակից 'ի Թեսաղոնիկէ, եւ զայս գրեցի առ քեզ զի գիտասցեն և հեռաւորք զնենդութիւնս Հրէից, որ ոչ հաստատեցան։ Բայց Փիլիպպոս և Սենեկոս և Յաւստոս և Ղեւի և Ակիբ և Յուդայ, զպիրք անուանիք Հրէից հանդերձ այլովք ընկերօք իւրեանց, եկին դարձեալ առ իս և խոստովան եղեն 'ի Քրիստոս և ընկալան զմկրտութիւն, եւ ահա մաքառին 'ի գրոց մարգարէից ընդ որդիս ժողովրդեան իւրեանց։ բայց Գամաղիէլ աւագ քահանայից նոցա, ոչ ուրանալով ուրանայ 'ի Քրիստոսէ իբրեւ զորդիս աղգի իւրոյ յայտնապէս, եւ ոչ խոստովանելով խոստովանի այժմ իբրեւ զմեզ, և որք կամին չարախօսել զմէնջ յորդւոց ժողովրդեան իւրեանց, ոչ ընդունի զնոսա, այլ 'ի լռութեան և 'ի հանդարտութեան է, մանաւանդ զի ետես եթէ զկնի վերանալոյ Տեառն մերոյ առ Հայր իւր, որպէս թռեաւ աւետարանն նորա ընդ ամենայն տիեզերս իբրեւ զլոյս արեգական որ սփռեալէ ընդ ամենայն արարածս, և ահա երկրպագի յամենայն հեթանոսաց և փառաւորի յամենայն լեզուաց, և 'ի ձեռն խորհրդոյ Մարմնոյ և Արեան իւրոյ, զոր ետ մեզ եւ խնամէ զերկրպագուս իւր եւ ոչ թողու զնոսա մինչեւ կատարի այս աշխարհ եւ երեւի այն աշխարհ, որոյ չիք կատարումն սկզբան նորա։ զայս զոր դու ինքնին գիտես։ Ողջոյն տուր Նիկանովրայ և Պարմենայ և Ոնեսիփորայ և եկեղեցեաց ամենեցուն որ այդր են եւ քահանայից առաջնորդաց նոցա։ Ողջոյն առ յեկեղեցւոյս Երուսաղէմի որ աստ է, եւ սպասեմ եւ ակն ունիմ, զի գրեսցես առաքեսցես ինձ զպատճէն բանիցս այսոցիկ 'ի ձեռն Ասիդիսեա։

Գրէ Տէրտուղիանոս առ Եւսեբեաւ՝ թէ Պիղատոս ծա-